

ՔՐԴԵՐ

Սորանով պէտք է մի համառօտ տեղեկութիւն տամ ընթերցողներին մի ժողովրդի մասին, որի հետ թէպէտեւ պատմական ժամանակներից ամենամօտ հարեաններ ենք եղել, մանաւանդ վերջին Ռուս-տաճկական պատերազմից լեռով տաճկահալոց աղէտների ժամանակ ամենամեծ դերն են խաղացել մեր կեանքումը, բայց դժբաղտարար մեղանից շատերը գուցէ անգլիացիների ու ֆրանսիացիների մասին աւելի շատ տեղեկութիւն ունենան, քան մեր քթի տակ ապրող քիւրդ ժողովրդի մասին, որի կեանքը և նիստ ու կացը մեր կեանքի և նիստ ու կացի հետ համեմատելով, մեծ տարբերութիւն ունի:

Իացի Պարսկաստանի և Տաճկաստանի քիւրդերից՝ նոքա բաւականին թուով ապրում են մօտ $\frac{1}{4}$ դար և Ռուսահայաստանում: Եւ եթէ համեմատելու լինինք ռուսահայատակ քիւրդին տաճկա և պարսկահայատակ քիւրդի հետ, կտեսնենք որ միևնույն քիւրդն է, բոլորն էլ միատեսակ ապրուստ, սովորութիւն և նիստ ու կաց ունին: Ինչպէս որ մի քանի դար առաջ քիւրդը ապրելիս է եղել, հաստատապէս կարելի է ասել, որ այժմ էլ նոյն դրութեան մէջն է գտնուում: Լուսաւորութիւն և քաղաքակրթութիւն ասած բանը քիւրդի շէմքից ներս չէ մտել: Հետևաբար՝ խօսելով որ և իցէ բաժնի քիւրդերի մասին, նկարագրած կլինենք բոլոր քիւրդերին: Միայն ալս կալ, որ վերջին տարիներս քիւրդերը սկսել են հալեցից երկրագործութեան և տնտեսութեան մասին շատ բան սովորել:

Ինչպէս գիտենք, քիւրդը լեռնարնակ խայնարած ժողովուրդ է: Առանց լեռների քիւրդի կարծիքով իւր կեանքը մեռած է: Նորա համար գերադասելի է կեանքից զրկուելը քան իւր սիրած լեռներից և նա կարծում է, որ իւր լեռնական կեանքը աստուածատուր մի պարզ և Նրբ մի անգամ ծանօթ քիւրդերից մէկին հարցրի թէ ինչու համար են լեռներում բնակում, քանի որ զրկուած են դաշտալին բնակիչների բոլոր բարութիւններից, քիւրդը ինձ պատասխանեց «Բեզի մատաղ. երբ Աստուած աշխարհ ստեղծեց, բոլոր մարդիկ սկսեցին արան տեղիւրում ապրել, սար ու ձոր երբ տեսան որ իրենք անտէր մնացին, սկսեցին ալնչաի լաց լինել, որ նորանց արտասուքից համալն աշխարհը արիւնէ ծով դար-

ձաւ։ Աստուած լսեց նորանց լաց ու աղաղակը և ստեղծեց մեղ քիւրդերիս, որ բնակուեցանք լեռներումը և տէր դարձանք այս սար ու ձորին, նոր դադարեց զորանց աղաղակը։ Այս խօսքերից լստոյ իմ խօսակից քիւրդը մի խոր հոգոց քաշելուց լստոյ՝ շարունակեց ափսոսի զուրբան, էս պաղ ջրերը որ տեսնում ես (նա ցոյց տուեց լեռներից դէպի վալը կշկալով հոսող ջուրը), մեր արիւնն է. այս կանաչները (կանաչադարձ լեռնադաշտը), մեր միսն է. իսկ այս սարերը և քարերը (չրջապատող լեռները) մեր գործ ու առուտունն է։ Մենք սորանց սովորելուց լստոյ ալ ևս ինչպէս կարող ենք դաշտալին տեղերում ապրել։ Ահա քիւրդի հաւատքը իւր՝ լեռնալին բնակութեան վերաբերմամբ։

Լեռնալին ժողովուրդը անուանելով՝ չէ նշանակում. թէ բոլոր քիւրդերն էլ լեռներումն են բնակւում, վերցնենք հէնց ռուսահպատակ քիւրդերին, որոնց մեծամասնութիւնը թէպէտեւ Մեծ և Փոքր Մասիսների լանջերի, Բարթող լեռնաշղթայի և նորս գեղանկար Սինադալ լեռների մէջն են բնակւում, բաց բաւականին թուով քիւրտեր բնակւում են նոյնպէս Արարանի, Օթալիշի և Շիրակի դաշտավայրերումը և Արաքսի ափերում։ Սոքա էլ չնայած իրենց դաշտաբնակութեանը, երբէք չեն զրկւում լեռնալին կեանքից։ Գարունքը բացուելուն պէս դաշտալին քիւրդը ալիս իւր ձմեռուալ խրճիթը չէ մընում, հաւաքում է իւր քոչ՝ ջուլ ու փալասը, կաթնատու և աշխատող անասունները և ուղևորւում, Արագածի, Գեղամալ և Բարթող լեռների ստորոտները վրանը զարնում 1) նստում է, և որովհետև ա. զարնանը լեռների բարձր տեղերումը դեռ ձիւնը չի հալուել և բ. որ տարուալ այդ ժամանակը ցրտերին դիմանալ չեն կարող, ուստի քրդերը ինչպէս և առ հասարակ սար բարձրացող հալերը և թուրքերը սկսում են կամաց-կամաց ստորոտից դէպի լեռան բարձրութիւններ՝ իրենց որոշեալ հանդերն հասնել, ինչպէս և աշունքը վալը իջնելու ժամանակ։

Սրեանեան նահանգը առնուելուց լստոյ լեռնալին ալդ դրախտավայր տեղերը բացառապէս քիւրդերին է տրուել, որոնք և վճարում են նոյն տեղերի հարկը։ Արագածը, որի չրջակալ ժողովուրդը գլխաւորապէս հալերից և մասամբ թիւրքերից է բաղկացած, շատ քիչ բաժին ունին իրենց օգտաւէտ լեռնից, ալն ինչ իրենցից աւելի հեռու ապրող քուրդը տարուալ ամենահիւանալի ժամանակին (մօտաւորապէս ապրիլի վերջերից, մինչև սեպտ. վերջերը) գալիս և ամբողջ լեռանը

1) Փիւրդի վրանները բաղկացած են 1 կամ 2 երբեմն էլ 3 մասերից, Աղբառներինը բաղկացած է 1 մասից. աւելի ունեւորներինը 2 մասից մէկը իրենց կաթնատու անասուններից ստացած արդիւնաբերութիւնների եղի, կաթի, բրդի և ալ բաների համար, իսկ մյուսը իրենց բնակութեան, իսկ հարուստները բացի 2 մասից ունին և 3-րդ մասը հիւրերի համար։

տիրապետում են։ Հայերն առ հասարակ անասնապահութեամբ շատ քիչ են պարապում։ Երեւի մասամբ լարմար տեղի բացակայութեան և մասամբ երկրագործական ծանր աշխատանքի հետ նեղիտ կապուած լինելու պատճառով։ Չնայած որ ալժմս դաշտաբնակ քիւրդը բաւականին կանոնաւոր կերպով սկսել է երկրագործութեամբ պարապել, բայց էլի ալնպէս չէ կամար հաղլւ մի առ ժամանակ աշխատող ձեռքերը մնում և իրենց աշխատանքը մի կերպով վերջացնելուց լետու, նորից բարձրանում են սարը իրենց ընտանիքի մնացեալ անդամների մօտ, իսկ լետու երբեմն գնում գալիս են իրենց ցանքերին նաելու։ Յաճախ է պատահում, որ քիւրդերը իրենց ցանքսերին բոլորովին ձեռք չեն տալիս, ալ հալ կամ թիւրք գիւղացիներին կիսրար ցանել տալով, ամառն ամբողջապէս սարն են անցկացնում, իսկ քիւրդի անմարդաբնակ գիւղը, որ կիսակործան աւերակի տպաւորութիւն է թողնում, մէկ կամ երկու պահապանի հսկողութեան է լանձնւում։ Մինչդեռ հարեան հայերի և թիւրքերի գիւղերում տարուալ ալդ օրերը աշխատանքի ամենաեռուն ժամանակն է։ Նոքա ամբողջ օր արին քրտինք թափելով, գիշերն անդամ խաղաղ քուն չեն վարելում։

Քրդական գիւղերը առ հասարակ շատ փոքր են։ Ամենասովորականը հաղլւ 10—15 տանից բաղկացած լինին։ Շատ է պատահում նոյն իսկ 3—5 տուն ունեցող գիւղեր ևս։ Ալդ բանը կարելի է վերագրել նախ լեռներում մեծ գիւղերի լարմար տեղեր, չգտնուելուն և դորա համար էլ ամեն մի լարմար, բայց փոքրիկ տեղերումը սկսում են բնակուիլ, և բ. որ քիւրդերի մէջ մարդասպանութիւնը և վրէժխնդրութիւնը միշտ անպակաս է լինում, ալդ պատճառով էլ միմեանց մէջ թշնամութեան նշուլ նկատելով իսկոյն հեռանում են՝ ապագայ չարիքների առաջն առնելու համար։

Քիւրդերի գիւղերը չափազանց աղտոտ են և աւելի աղտոտ, քան հալ գիւղերը, քիւրդը մաքրութեան վերալ ուշադրութիւն չէ դարձնում։ Նորա զղեստներից սկսած մինչև կերակուրը, աղտի մէջ կորսուած է։

Քիւրդերը առ հասարակ քաղաք տեղերում չեն բնակւում։ Նոքա քաղաքներում ալնպէս խղճանում են, որ մարդս ակամայից մտածում է թէ ինչպէս լեռների ալդ առլւծը ալդտեղ թակարդ է ընկել։

Քիւրդերը լեռներում պարապում են անասնապահութեամբ, և ալդ պարապմունքին նպաստում են մեր ջրառատ լեռները և կանաչազարդ արօտատեղիները։ Քիւրդերի հարուստութիւնը ընդհանրապէս չափուում է անասուններով։ Նորանց մէջ բաւականին թուով անասունների կան։ Ռուսապատակ քիւրտերի մէջ կան ալնպիսիներ, որոնք 1000—2000 և նոյն իսկ 3000 գլուխ ոչխար ունին, մօտ 80—100-ի չափ ձի և նորա

համեմատ եղ, կով, դոմէշ և այլն։ Այդպիսի հարուստներից կարող են համարուել կաղաղի Մհէն։ Շամադին աղալի տունը (Չիլլացիների ցեղապետի տուն) և Հանանադի տուն (եղիտների ցեղապետ)։ Իսկ Տաճկահայտակ քիւրտերը կրկնապատիկ աւելի հարուստ են, և ինչու չ'իշին, քանի որ մի քանի տարի առաջ անադին հարստութիւն ունեցող հայկական գիւղերը այժմ փոշիների մի կովտ և վալրենի գաղանների որջ են դառել, իսկ դուրանց հարստութիւնը ի հարկէ քիւրդերը տիրապետեցին։ Ինձ պատմել են, որ Գլաթի հայ գիւղերի կողոպտման ժամանակ 500 զուլա ոչխար միայն, նոյն հայ գիւղի քիւրդ չոպանին է հասել։

Քիւրդերը ինչպէս մի քիչ վերև լինեցի, թէ Տաճկաստանում և ինչ Ռուսաստանում սկսել են երկրագործութեան մը պարապել։ Նոքա հացահատիկներից ցանում են ամենից շատ դարի և ապա ցորեն։ Երևի ցորենի շատ չ'ցանելու պատճառը նորա լաւ չ'բուսնելն է։ Եւթ է պատճառը, որ քիւրդերը ընդհանրապէս դարու հաց են ուտում հարուստներից սկսած մինչև աղքատը և միայն պատուաւոր հիւրերի ժամանակ սաջի¹⁾ վերայ պատրաստում են ցորենի հաց։ Բացի ցորեն և գարուց, քիւրդերը հունդեղէններից ցանում են կորեկ, կտուահատ, աճար ոսպ և այլն։

Քիւրդերը իրենց երկրագործութիւնից ստացած արդիւնքով չեն կարող նոյն իսկ իրենց տարեկան պաշարը հալթալթել, որովհետև լեռներումը ցուրտ է, կարկուտը անպակաս է և այլն, որ բոլորը իհարկ է ցորենի կամ հունդեղէնների առատ աճման ղեռնելուն պատճառ են դառնում, բայց քիւրդերը ունին աշխատութեան մի ուրիշ աղբիւր, որով կարողանում են առօրեայ անհրաժեշտ ցաւերը հոգալ։ Եւթ աղբիւրը իրենց անասնապահութեան արդիւնքն է։ Նոքա իրենց իւղ, պանիրը, մսացու անասունները, բրդեղէն զանազան գործուածքներ ծախելով, ստացած փողով թէ պակասորդ հացահատիկն են գնում, թէ ընտանեկան միւս կարիքները հոգում և թէ իրենց տուրքը վճարում։ Քիւրդը իւրտնտեսութեան և երկրագործութեան, վերաբերեալ աշխատանքի մէջ ոչ մի նոր սխտանի գործիք չունի։

Իպառալին քիւրդը լեռնալինի հետ համեմատած, թէ ֆիզիքապէս թուլ է և թէ աւելի չքաւոր։ Այդպիսիները մեծ մասամբ իրենց հարկան հայ կամ թուրք գիւղերով են ապրում՝ պատահած ժամանակ ծառայութիւններ անելով և պատահած ժամանակը գողութեան և լափշտակութեան դիմելով։ Քիւրդերը բոլորովին առևտուրով չեն պարապում։ Այդ բանում

1) Քիւրդերը հայ գիւղացիների նման թոնրի մէջ չեն թխում հացը, այլ մի կլորակ միշտ վառուած թոնրի վրայ տաքացնելով, բացուած խմորը վերայ են ձգում մինչև եփուել։ Նոքա օրը մի քանի անգամ են հաց թխում, որովհետև զար է հացը շուտ է հնանում։

քիւրդը շատ անընդունակ և զիւրահաւան է։ Արեւելեան աղղերի մէջ հաղիւ թէ գտնուի մի աղղ, որ առետուրի մէջ անջքան շուտ խաբուի, ինչպէս քիւրդը. այդ է պատճառը, որ քիւրդերի մէջ կամ քիւրդերի հետ առետուր ունեցող հալ կամ թուրք վաճառականներ, կարճ ժամանակամիջոցում հաւցին հարստութիւն են ձեռք բերում։ Տաճկահայաստանի, Փոքր-Ասիայի, Պարսկաստանի մի քանի քաղաքների համարեա բոլոր հարստները, կարելի է ասել որ այդ նոյն աղղիւրից են իրենց հարստութիւնը հաւաքել։

Քիւրդները բաղկացած են բաղմաթիւ մեծ և փոքր ցեղերի, և ամէն մէկ ցեղ ունի իւր առանձին ցեղապետը։ Յեղապետութիւնը քիւրդերի մէջ թէպէտ և ժառանգական է, բայց ցեղապետը պէտք է լինի ամէն արիւնարու կտրիճ տղամարդը. որը իւր ոճրագործութեամբ և քաջադործութեամբ գերազանցում է մեծ զերդաստանի միւս անդամներին։ Նոքա չափազանց մեծ լարգանք և սէր են տածում դէպի իրենց ցեղապետը։ Յեղապետը իւր ստորադրեալներին ինչ ծանր և վտանգաւոր կռուի էլ ուղարկի, ամենալոյս լծաւորութեամբ և առանց դիտակցութեան պատրաստ են նորա բոլոր հրամանները կատարել։ Ժողովուրդը նորանից հաշիւ պահանջելու երբեք լանդգնութիւն չի ունենալ։ Ժողովուրդի բոլոր գործերը, թէ տնտեսութեան և թէ կռիւների վերաբերմամբ, կարգադրում է ինքը ցեղապետը։ Նա իւր ցեղի անսահման գլուխն է համարում։ Կիսանկախ քիւրդը Տաճկաստանում անմիջական կերպով կառավարութեան հետ գործ չունի։ Կառավարութեան պատուէրները նախ լատնում է ցեղապետին և ապա միջնորդական կերպով՝ ժողովրդեան։ Նոյն կերպովն է հաւաքում քրդերից կառավարութեան պատկառող մասնաւոր տուրքը և ցեղապետը լանձնում կառավարութեան։ Քիւրդ ժողովուրդը ոչ թէ միայն հարկերի ժամանակ, այլ և ոչ մի անգամ չէ ենթարկւում տաճիկ դաթիւաների ոստիկանութեան անդուպ քմահաճութներին՝ ինչպէս անճարացած հալ գիւղացին, հակառակ դէպքում կարող են չարաչար տուժել, ինչպէս որ շատ անգամ պատահում է։

Տաճկահայերի հետ խառն և մօտիկ լարաբերութիւն ունեցող աշիրաթներից նշանաւոր են՝ հարսնանցիք, հալարանցիք, սիպկցիք, չիգկցիք, ջէլալցիք և ասլն։ Հարսնանցիք գլխաւորապէս բնակւում են Բուլանուղում։ Նորանց ցեղապետը լատնի Ռզա բէգն է։ Հալարանցիք՝ Արճէշում և նորանց ցեղապետները էմին և Հսէն արիւնրուշտ համիտիէ փաշաներն են։ Սիպկցիք բնակւում են Անթափում ամա Անթափ գաւառը Անթափ քաղաքի հետ չ'պէտք է շփոթել, որոնց ցեղապետները Հասան և Ուսուֆ բէգերն են։ Շիգկցիք՝ Վանի չրջակայքում և նորանց ցեղապետը Ռարբազ աղան է։ Իսկ

Ջէլլալցիք, որոնց ցեղապետները լալտնի Շամշատինովի տոհմն է, և որոնք ռուս տաճկական պատերազմների ժամանակ մեծ մասնակցութիւն են ունեցել:

Այս գլխաւոր ցեղերից զատ կան շատ փոքր ցեղ երևաւ. օրինակ Բիթլիսի և Մուշի շրջակայքումը գտնուող Բալաքցիք, Մստկցիք, լետոյ Ուշոթանցիք (երևի Ուշտունիք), Մոմկանցիք (Մամկունեանք), Բեգրանցիք (Բագրատունիք) և այլն: Այս ցեղերը ինչպէս հաստատում են կրօնափոխ հայեր են, որոնք ժամանակի ընթացքում կորցնելով ազգային լեզուն և սովորութիւնները, քիւրդերի հետ են ձուլուել: Սոքա մինչև վերջին տարիներս զարմանալի հալստէր էին և պէտք եղած ժամանակ աւելի հայերի կողմը կաշտպանէին, քան խուրճի կամ օտար քիւրդի: Նորանց ձերուհիները պատմում էին, թէ ինչպէս իրենց նախնիքը հայ են եղել. ինչպէս իրենց փոքր հասակում ծնողներին հետ բռնիկ ոտքերով ս. Վարապետ ուխտի էին գնում և այլն և այլն: Մինչև այժմ էլ պատմում են, որ միմեանց երգում տալիս մինչև որ ս. Յաղթէրիք ¹⁾ լէ գիւնալ» չասեն հայերէն լեզուով, հաւատք չեն ընծալում: Եւր վերջին տարիներս այդ նոյն ս. Յաղթէրքալ վանքի վանահօրը մօտկցիքը սպանում են և թալանը տանում, ասում են, որ Բալաքցիք վրէժխնդիր լինելու համար լարձակուեցան մօտկցիների վերալ և մօտ 20—30 քիւրդ սպանեցին նորանցից: Մինչև այժմ էլ մի որևիցէ զօրւար զործ կատալելիս, պէտք է երեսները խա. չախնքեն: Ոմանց ասելով սորանց մէջ բաւականին թուով հնութիւններ և Բագրատունեաց ու Ռուբինեանց ժամանակի փոքր եր գտնուում, և 1893 թ. եւրոպացի մի ճանապարհորդ այդ տեղերից հանգին հնութիւններ և փողեր է ձեռք բերել:

Այս փոքր ցեղերից նշանաւոր է մանաւանդ մօտկցիները. նա անցեալ դարի վերջին քառորդում մի քանի անգամ ապստամբեց տաճիկ կառավարութեան դէմ և միշտ էլ առանց ընկճուելու պաշտպանել է իւր ցեղական պատիւը: Հէնդ վերջին տարիներս (96 ին թէ 97-ին) ապստամբութեան ժամանակ ահադին թուով ջարդ տուին տաճկաց կանոնաւոր զօրքերին և նոյն իսկ խլեցին նորանց թնդանօթները: Մօտկցիների ապստամբութեանը նպաստում են իրենց անմատչելի լեռները: Սոցա մէջ ապրում են մի բուռն հայերն ևս, որոնք առանձին քիւրդ աղաների հովանաւորութեան տակ են, որի փոխարէն վճարում են նոյն աղաներին մի օրոշ տուրք, բացի տէրութեան պատկանող օրինաւոր տուրքից: Ի դէպ է ասել, որ այժմ ամբողջ գիւղացի տաճկահայերը համարեաւ այս ձեւով են կառավարւում Սուլթանի երկրում, ապա թէ ոչ մի բովէ անգամ գոթութիւնը պահպանել չեն կարող: Իսկ ինչ վերաբերում է դորանց անտեսական վիճակին, շատ աննախանձելի դրութեան մէջ է. քանի որ տաճկահայ գիւղացին այժմ

¹⁾ Ս. Յաղթէրիքը Խութալ հայոց վանքերից մէկն է:

բառի բուն նշանակութեամբ ոչինչ չունի—ոչ երկրագործական գործիք, ոչ տաւար, ոչ սերմնացու, ոչ շարժական և անշարժ կալուածներ և այլն և այլն: Այժմ հայ գիւղացին հազիւ լաւողացնում է քուրդի արօր ու գութնով քիւրդի արտերը ցանել, և իւր արիւն քրտնքից ստացած արդիւնքի մի չնչին մասը հազիւ քիւրդը բարեհաճի իւր խոլամ-ծառայ հայի երեսը չպրտել:

Քրդերի այս արիւնարբու ցեղերը տաճկահայոց վերջին աղէտների ժամանակ, իրենց անգթութիւնների պատճառով, Հայ պատմութեան էջերումը անջնջելի պիտի մնան: Սորանցից մասնաւոր հալածարանցիք իրենց աներեակայելի բարբարոսութեամբ գերազանցեցին միւս ցեղերին: Գէթ միւս ցեղերի մէջ գտնուեցին աշակերտներ, որոնք ոչ թէ մի տուն կամ մի գիւղ, այլ ամբողջ դաւառի հայերի պաշտպան հանդիսացաւ: Այսպէս օրինակ Ալաշկերտի Հասան ազան, ամբողջ Ուշ-Քիւլիսա վանքը իւր շրջակայ հայ գիւղերովը ազատեց միւս քիւրդերի լարձակումներից: Բաշկալէի մօտերքում մի ինչ որ Մահ-մադ-աղայ իւր շրջակայ հայերին: Աղայիսի ազատարար քիւրդերին և թուրքերին կարելի է 2 տեսակի բաժանել. ա. նոքա, որոնք աւելի հեռատես լինելով, ազատեցին իրենց ստորադրեալ հայերին, որպէս զի լեռնոյ ամբողջովին իրենց ծառայեցնեն, կամ թէ չէ ուղղակի երկիւղ կրեցին բարբարոսութիւններ գործելուց, և բ. նոքա, որոնք նամարդութիւն—ստորութիւն համարեցին դարերից ի վեր միատեղ ապրող հարեան հայերի անմեղ արիւնը թափել:

Կար ժամանակ, որ եթէ նոյն իսկ քիւրդը տրամադիր էլ լինէր հայերին վնասելու, կառավարութիւնից քաշոււմ էր. բայց 10 տարուց աւելի է, որ տաճկահայերի՝ քիւրդերից կրած տանջանքները ծալրանդութեանը հասաւ, և ահա ինչու երբ զանազան քրէական լանցանքների համար գող, աւօղակ և մարդասպան քիւրդերին Պօլիս հրաւիրեց Սուլթանը. քրիստոնեայ ժողովրդի ուրախութեան չափ չկար. կարծելով որ արդարագոյն Սուլթանը պատժելով խաղաղ երկրագործի կեանքը վրդովող այդ հիւշներին, պիտի կարողանան վերջապէս հանգիստ շունչ քաշել, իրենց սիրելի արօր և գութանի լեռնից լինել, իրենց մատաղահաս հարս ու աղջիկը այդ անգութներ լի վաւաշոտ կրքերից ազատ պահել և վերջապէս առանց արտասուքի չոր հաց կրծել, բայց ճշդափ եղաւ տնտէր ժողովրդի զարմանքը, որ փոխանակ պատժի, այդ գաղանները մէկ մէկ նշան գլխներին, սուրը կողքներին, լատուկ ձեռով և զինուորական բարձր պաշտօններով, կատաղած և երես առած իրենց տները վերադարձան, կայծէք ուխտելով, որ քրիստոնեայ երկրագործ ժողովրդի տուն ու տեղը, անդն ու անդաստանը հրոյ և սրի ճարակ դարձնեն:

Քիւրդերի՝ Սուլթանից ստացած այդ պաշտօնները լատուի են համիդիէ անունով, որը հաստատուեց 1893 թ. Ա-

մեն մի համիրդիէ պաշտօնակալ, կառավարութեան տուած պալմանների համաձայն պարտաւոր է կարիք եղած ժամանակ իրենց իրաւունքի տակ գտնուող ցեղակից քիւրդներովը, զինուորական ամենայն պատրաստութեամբ, Սուլթանի հզօր գահը պաշտպանելու համար օգնութեան հասնել։ Այսպիսով Սուլթանը կարողացաւ իւր ի վաղուց փափալած նպատակին մասամբ հասնել՝ նախ քիւրդներին իւր գահի հետ կապելով, և ապա գործադրելով նորանց իբրև միջոց՝ ջնջելու երկրի ամենաօգտակար տարրը։

Վերջապէս Սուլթանը կարծէք զգալով իւր հիւանդ պե. տութեան քայքայումը, չբաւականացաւ համիրդիէ պաշտօններով քիւրդներին սերտ կերպով դէպի ինքը գրաւելու ալ ալ տանգամ ուրիշ հնարքների դիմեց։ Նա իւր առանձին հովանաւորութեան տակն առաւ քրդական չեխերից շատերին և լիառատ կերպով վարձատրեց՝ տալով նոցա զանազան պատիւներ, անշարժ կալուածներ և բարձր իրաւունքներ։ Այդ քիւրդ չեխերից նշանաւոր են Բիթլիսում Քուֆրաու չեխը, Հիզանի չեխը (այս չեխը Բաֆֆիի «Ջէլլալէդին» չեխի որդին կամ եղբայրն է), Բուլանդի չեխերը և ալլն։ Դոքա ունին իրենց սեպհական հոլակապ շինութիւնները և թաքիւնները—ձրի ճաշարանները, աղքատների, հիւրերի կամ առ հասարակ ցանկացողների համար։ Սոցանից մանաւանդ նշանաւոր է Բիթլիսի չեխը, որի ոտքն են գնում երկրի հեռաւոր ծայրերից, նոյն իսկ Ռուսաստանից և Պարսկաստանից անագին թուով քիւրդեր և թուրքեր, այդ գերբնական փէխամպերի — մարգարէի օջախումը թաւ ի խ մտնելու՝ նորանցից սովորելու մահմեդականութեան ճշմարիտ օրէնքները և պատուէրները։ Մի ժամանակ քիւրդը երբեք մոլեռանդ մուսուլման չէր, և չէր հասկանում նոյն իսկ իւր կրօնի ամենաէական կէտերը. նա չունէր (ինչպէս և այժմ) ոչ մզկիթ, ոչ գիր և ոչ դպրութիւն։ Իսկ այժմ քիւրդը արդէն բաւականին ֆանատիկ մուսուլման է։ Բաւականին եմ ասում, որովհետեւ քիւրդը ինչպէս էլ որ լինի, չունի այն կրօնական մոլեռանդութիւնը, որ լատով է մահմեդական բոլոր ազգերին։ Իսկ ներկայ առեւտրութիւնը դէպի հայերը, ոչ ալ ինչ է, եթէ ոչ Սուլթանի ցանած սերմերի արդիւնքը, և կարելի է բոլորովին ժամանակաւոր համարել քիւրդը ելբէք կրօնական ազգ չէ։

Ա. ԳԻՐԻՐՋԵԱՆ

(Վերջը հետեւեալ համարում)